

.Կենսաբազմազանության պահպանությունը, օգտագործումը և կայուն կառավարումը գյուղական համայնքներում



Արարատի մարզ



1. Նոր Ուղի
2. Շաղափ
3. Սուրենավան

Գեղարքունիքի մարզ



1. Քալավան
2. Վարդենիկ

Կենսաբազմազանության պահպանությունը, օգտագործումը և կայուն կառավարումը գյուղական համայնքներում

Կենսաբազմազանությունը կենդանի օրգանիզմների տարատեսակությունն է, որն իր մեջ ներառում է ներտեսակային, միջտեսակային և էկոհամակարգերի բազմազանությունը, այլ կերպ ասած՝ այն բնապահպանական տեսության մեջ հիմնական հասկացությունն է, հասարակության կենսագործունեության, սոցիալ-տնտեսական զարգացման հիմքը:

Ըստ կենսաբազմազանության միջազգային կոնվենցիայի (Convention on Biological Diversity, CBD)՝ կենսաբանական բազմազանությունը «Կյանքը երկրի վրա» հասկացության օրգանիզմների տեսակային բազմազանությունն ու ցանկացած ծագում ունեցող կենդանի օրգանիզմների միջև փոփոխականությունն է՝ նրանց գենային հավաքակազմի և բարդ էկոհամակարգերի հետ միասին, որոնք առաջացնում են կենդանի բնություն: Բնապահպանության հիմնական խնդիրը կենսաբազմազանության պահպանությունն է:

Կենսաբազմազանության պահպանման համար ՀՀ-ում գործում են մի շարք օրենքներ՝ ուղղված բնական միջավայրի պահպանության և օգտագործման կարգավորմանը, ինչպես նաև՝ անհրաժեշտ իրավական հիմքեր ստեղծելուն՝ ընդերքի, ջրերի, մթնոլորտային օդի, բուսական և կենդանական աշխարհի, անտառների պահպանության և օգտագործման հարաբերությունները կարգավորող բնապահպանական օրենսդրության զարգացման համար:

Կենսաբազմազանության պահպանությունն իրականացվում է «in-situ» (բնական միջավայրում) և «ex-situ» (բնական միջավայրից դուրս) պայմաններում: Օրինակ՝ կենսաբազմազանության «in-situ» ձևաչափի պայմաններում հայ ժողովրդի տնտեսվարման ավանդական ձևերում պաշտամունքի առարկա են դարձել տարբեր բուսատեսակներ (կեչի, սոսի, կաղնի, ընկուզենի և այլն)՝ դրանց շրջակայքում սահմանելով պահպանության և օգտագործման հատուկ պայմաններ:

ՀՀ աշխարհագրական դիրքը և ռելիեֆը, շնորհիվ հարուստ բնաշխարհի և ագրոկենսաբազմազանության ձևավորման, մեր երկրում կենսաբազմազանության մեծ տեսականու համար նպաստավոր պայմաններ են ստեղծել: ՀՀ տարածքում հայտնաբերված են մոտ 3500 տեսակի բարձրակարգ ծաղկավոր բույսեր, ավելի քան 17500 կենդանատեսակներ, որոնցից մոտ 500-ը՝ ողնաշարավորներ, իսկ ցածրակարգ բույսերի և միկրոօրգանիզմների քանակությունն էլ անցնում է մի քանի տասնյակ հազարից:

Իսկապես, ՀՀ կենսաբազմազանությունը հարուստ է տնտեսապես արժեքավոր տեսակներով. բույսերի մոտ 2000 տեսակներ օժտված են սննդարար, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով: Հասարակության զարգացմանը զուգընթաց ընդլայնվում է կենսաբազմազանության բաղադրիչների ներգրավումը մարդու գործունեության տարբեր ոլորտներում, ինչպես տնտեսական, այնպես էլ գիտական առումով (օրինակ՝ բուժման միջոցների կամ դեղորայքների որոնման մեջ):

Կենսաբազմազանության պահպանությունը համընդհանուր էկոլոգիական խնդիր է, քանի որ բուսական ու կենդանական աշխարհի յուրաքանչյուր տեսակի կորուստը կարող է


վճռական նշանակություն ունենալ էկոհամակարգերի ամբողջականության, հավասարակշռության ապահովման, մարդկային առողջության և կայուն զարգացման համար:

Կենսաբազմազանության օգտագործումը ՀՀ-ում վերջին շրջանում՝ կապված շրջակա արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, էներգետիկ և այլ աղտոտվածությունների աճի հետ, ինչպես նաև պայմանավորված անտառների, արոտավայրերի և այլ էկոհամակարգերի ակտիվ շահագործման հետ, ընթացել է առանց հաշվի առնելու բուսական և կենդանական պաշարների վերարտադրության ապահովման բնական հնարավորությունները. արդյունքում աստիճանաբար տեղի է ունեցել տեսակների դեգրադացիա և ոչնչացում՝ հանգեցնելով կենսաբազմազանության աղքատացման: Իրավիճակն ավելի է սրվել վերջին տարիների քաղաքական և սոցիալ-տնտեսական վերակառուցումների ընթացքում կենսաբազմազանության անկայուն օգտագործման պատճառով, և մի շարք տեսակներ էլ հայտնվել են անհետացման եզրին՝ տեղ գտնելով ՀՀ Կարմիր գրքում:

Բերքահավաքի, մշակվող վայրի բույսերի օգտագործումն ու արտադրանքը

Բնապահպանական Ծրագրի (UNEP/GEF) իրականացման գերիսնդիրն է կենսաբազմազանության պահպանությունը, օգտագործումն ու զարգացումը ուսումնասիրվող գյուղական համայնքային տարածքներում (Արարատի մարզ, Գեղարքունիքի մարզ):

Արարատի մարզ



Գեղարքունիքի մարզ



ՀՀ-ում գյուղատնտեսության արտադրության մեծ մասի մատակարարը **Արարատյան հարթավայրն է**, մասնավորապես մեզ հետաքրքրող իր 3 (երեք) համայնքով.

- Նոր Ուլի
- Շաղափ
- Սուրենավան:

1. Լոր Ուղի համայնք (տարածքը՝ 2,7քկմ, բնակչությունը՝ 782 մարդ):

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Համայնքի գլխավոր հատվածը մասնագիտացած է գյուղատնտեսության մեջ՝ զբաղվելով տնկիների մշակմամբ և այգեգործությամբ: Համախառն բերքի մեծ մասը կազմում է բույսերի և մրգերի աճեցումը: Հիմնական պտղատու այգիներն են խաղողը, ծիրանենին, դեղձենին. մշակվում են նաև կեռասենի, սալորենի, խնձորենի, տանձենի և այլն:

2. Շաղափ համայնք (տարածքը՝ 6,2քկմ, բնակչությունը՝ 1023 մարդ):

Համայնքը տեղակայված է Վեդի գետի ձախ կողմում՝ Շաղափ հովտի վրա, որի շնորհիվ էլ ունի ոռոգման բարենպաստ պայմաններ: Կլիման չոր է և ցամաքային: Ձմեռը մեղմ է, ամառը՝ շոգ և ցամաքային: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, ինչպես նաև հացահատիկի և այլ կերային կուլտուրաների մշակությամբ:

3. Սուրենավան համայնք (տարածքը՝ 27,69քկմ, բնակչությունը՝ 2784 մարդ):

Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, հատկապես ծիրանի, խնձորի և խաղողի մշակությամբ: Շնորհիվ իր կլիմայական պայմանների՝ այս համայնքն առաջինն է, որ շուկային տրամադրում է միրգ: Գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկը պտղաբուծությունն է: Երկրի նպաստավոր կլիմայական գոտիականության շնորհիվ մրգերը հասունանում են ոչ միաժամանակ: Մա երկարաձգում է մրգերի պահունակության ժամկետը և թուլացնում մրգերի մատակարարման սեզոնային լարվածությունը: Տարբեր բարձրություններում, կլիմայի փոփոխության հետևանքով, մի շարք առանձնահատուկ սորտեր ունեն եզակի համուլիտ և հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլև՝ արտերկրում:



Արարատի մարզը տնտեսապես ՀՀ ամենազարգացած մարզերից է, հատկապես կարևորվում է իր գյուղատնտեսական նշանակությամբ: Ունենալով Արարատյան դաշտի մի մեծ հատված՝ մարզը տալիս է ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի զգալի մասը: Առավել զարգացած է երկրագործությունը: Հայաստանն առանձնապես հարուստ է

ծիրանով, դեղձով, խնձորով, սալորով, տանձով, սերկնիլով, ընկույզով, նշով, թզով և այլ մրգերով: Թեև նշված տեսակներն աճում են երկրի բազմաթիվ տարածաշրջաններում, Հայաստանի պտղաբուծության կենտրոնն, այնուամենայնիվ, Արարատյան հարթավայրն է: Մարզի հիմնական մշակաբույսերն են ձմերուկը, սեխը, լոլիկը, վարունգը, լոբին, սիսեռը, կանաչ պղպեղը, սմբուկը, ցորենը: Երկրագործությունը 90%-ով ոռոգովի է: Այդ նպատակով օգտագործվում են ինչպես գետերի ջրերն իրենց ջրանցքներով, այնպես էլ՝ արտեզյան հորերի ջրերը:

Ստորև նշված ցանկում տեղ են գտել Արարատյան դաշտում (գյուղական համայնքներ) գյուղատնտեսության համար մեծ նշանակություն ունեցող պտղատու այգիները, բանջարաբուստանային կուլտուրաները, ինչպես նաև վայրի մշակաբույսերը.

Ծիրանենի (լատ.՝ *Armeniaca*): Վարդագգիների ընտանիքին պատկանող պտղատու ծառ է: Հայաստանի պայմաններում պտուղները հասունանում են հունիսի 15-ից մինչև օգոստոսի 20-ը ընկած ժամանակահատվածում: Ծիրանենին ՀՀ-ում մշակվող հիմնական և



առաջատար պտղատու տեսակն է (մշակվում է 50 տեսակ): Այն մեծ պահանջարկ ունեցող միրգ է արտերկրում:

Այգիները հիմնականում կենտրոնացված են Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց ձորի մարզերում: Փոքր այգիներ կան նաև Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում: Առավել տարածված են

Նախիջևանի կարմիր, Երևանի, Սաթենի, Խոսրովենի, Օրդուբադի, Համբան, Ղևոնդի տեսակները: Ընտրասերման միջոցով ստեղծվել են Արագածի, Արարատի, Նաիրիի, Վասպուրականի, Օշականի, Ոսկի, Մասիս, Վաղահաս վարդագույն նոր տեսակները (4 տարեկան ծառն արդեն պտուղներ է տալիս):

Տանձենի (լատ.՝ *Pýarm, turcomanica*-տեսակ):

Վարդագգիների (վարդաձաղիկներ) ընտանիքի պտղատու ծառերի ցեղատեսակին է պատկանում, հայտնի է տանձենու մոտ 60 տեսակ, Հայաստանում՝ 20 (սովորական, կովկասյան, Զանգեզուրի և այլ տեսակներ), որոնք տարածված են Լոռիում, Տավուշում, Վայոց ձորում, Սյունիքում և այլուր: Տանձենու (*turcomanica*) տեսակի բարձրությունը հասնում է մինչև 15 մ-ի: Փոշոտումը կատարվում է միջատների միջոցով:



Աճում է թեթև (ավազային), միջին (կավային), ծանր (կավային) հողերում, նախընտրում է չոր կամ խոնավ հողեր, կարող է աճել նաև խիստ ծանր կավային, թթու, բնային և հիմնային (ալկալային) հողերում, կիսաստվերում (լուսավոր անտառային վայրերում) կամ արևի տակ: Դիմանում է երաշտին և մթնոլորտային աղտոտումներին:

Սալորենի (լատ.՝ *Prunus*): Վարդագգիների ընտանիքին պատկանող պտղատու թուփ կամ ծառ է: Մշակության մեջ առավել տարածված է սովորական կամ ընտանի սալորենին:



ՀՀ-ում հայտնի է 3 վայրի տեսակ՝ փշավոր ու սովորական սալորենիները և մամխին: Աճում է ստորինից մինչև վերին լեռնային գոտու թփուտներում, անտառներում: Գրեթե ամենուրեք մշակվում է ընտանի սալորենին (դամբուլենի, շլորենի), հյուսիսային շրջաններում հանդիպում է նաև մամխին, ինչպես նաև ՀՀ ներմուծված Աննա Շպետ, Դեղձային, Ռենկլոդ կանաչ, Վենգերկա

սովորական և իտալական, Ալբուխարի և այլ սորտեր:

Հաղարջենի (լատ.՝ Ribes): Կոկոռազգիների (Grossulariaceae) ընտանիքի բույսերի ցեղատեսակ է, որը ՀՀ-ում հանդիպում է 6 տեսակ՝ արևելյան, ալպիական, Բիբերշտեյնի, հայկական, Ախուրյանի, սովորական: Տարածված է անտառներում, նոսրանտառներում, թփուտներում, ժայռաձեղքերում, կիրճերում և այլուր: Սովորական հաղարջենին աճեցվում է գրեթե բոլոր մարզերում: Մշակության մեջ տարածված են նաև սև ու կարմիր հաղարջենիների ներմուծված տեսակները: Հաղարջենու Ախուրյանի և հայկական տեսակները բնաշխարհիկներ են. գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:



Մաարենի (լատ.՝ Rōsa): Վարդագիների ընտանիքին պատկանող վայրի և մշակովի բույս է:



Տարածված է ՀՀ բոլոր մարզերում: Աճում է լեռնալանջերին, անտառեզրերին, թփուտներում, բաց տարածքներում (900-2200մ բարձրություններում) և այլն: Ծաղկում է հունիսից մինչև հուլիս ընկած ժամանակահատվածում, իսկ սերմերը հասունանում են հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին: Փոշոտումը կատարվում է մեղունների, ճանձերի, բզեզների

միջոցով: Աճում է թեթև (ավազային), միջին (կավային) և ծանր (կավային) հողերում՝ նախընտրելով չոր հողեր (նաև խիստ ծանր կավային հողեր): Դիմանում է խիստ ուժեղ քամիներին:

Սզնի (լատ.՝ ալոճենի-hawtorn): Բարձրությունը հասնում է 6 մ-ի միջին տեմպերով: Ցրտադիմացկուն չէ: Ծաղկում է ապրիլ ամսից մինչև մայիս, իսկ սերմերը հասունանում են սեպտեմբերից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Փոշոտումը կատարվում է մժեղների միջոցով: Աճում է թեթև (ավազային), միջին (կավային) և ծանր (կավային), նաև խիստ ծանր կավային հողերում, թթու, բնային և հիմնային (ալկալային) հողերում: Կարող է աճել նաև ստվերոտ տեղերում (խորը անտառային տարածքներում), կիսաստվերում (լուսավոր անտառային տարածքներում) կամ արևի տակ: Նախընտրում է խոնավ կամ թաց հողեր, կարող է դիմանալ երաշտին և մթնոլորտային աղտոտումներին:



Ունաբի (լատ.՝ Ziziphus): Բարձրությունը հասնում է 7-ից 10 մ-ի մեծ տեմպերով: Ծաղկում



է ապրիլից մայիս ընկած ժամանակահատվածում, իսկ սերմերը հասունանում են հոկտեմբերին: Փոշոտվում է միջատների միջոցով: Աճում է թեթև (ավազոտ), միջին (կավային) և ծանր (կավային) հողերում, նախընտրում է չոր կամ խոնավ հողեր, կարող է աճել նաև ցածր սննդառության հողերում, ինչպես նաև թթու, բնային և հիմնային (ալկալային) հողերում, չի կարող աճել ստվերում: Դիմանում է երաշտին:

Թթենի, թթի ծառ, շերամածառ (լատ.՝ Morus): Մեղրատու է, Ընդգրկում է թափվող ծառերի 17 տեսակ: Տարածված է տաք ջերմային գոտիներում, ինչպես նաև մերձարևադարձային գոտիներում՝ Հյուսիսային Ամերիկա, Աֆրիկա, Ասիա: ՀՀ-ում մասնավորապես մշակվում է Արարատյան դաշտում, հարավային, հյուսիս-արևելյան գոտիներում: ՀՀ-ում մշակության մեջ տարածված են սպիտակ (*Morus alba*) և սև (*Morus nigra*) թթենիները:



Փշատենի (լատ.՝ Elaeagnus): Փշատազգիների ընտանիքին պատկանող մշտադալար

տերևաթափ ծառեր կամ թփեր են: Հայտնի է ՀՀ-ում 2 տեսակ՝ փշատենի արևելյան (*E.orientalis*) և եզատերև (*E. angustifolia*), երկու տեսակն էլ գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Տարածված է Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Աճում է (ստորին լեռնային գոտիներից մինչև միջին լեռնային գոտիներում) գետերի և առուների ափերին, խոնավ



վայրերում ու տարբեր տիպի հողերում: Հողի նկատմամբ պահանջկոտ չէ: Չորադիմացկուն, աղադիմացկուն և ցրտադիմացկուն է: Մեղրատու է և երկարակյաց:

Սպանախ (լատ.՝ Spinacia oleracea): Աճում է թմբերի, չոր թեքությունների վրա, քարքարոտ վայրերում. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Սպանախի արժեքավոր հատկություններից են նրա վաղահասությունը և ցրտադիմացկունությունը, որոնց շնորհիվ Արարատյան հարթավայրում սպանախը հնարավոր է օգտագործել աշնան, ձմռան և վաղ գարնան ամիսներին:



Ուրց (լատ.՝ Thymus): Խուլեղինջազգիների (շրթածաղկավորների)



ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղատեսակից է: Հայաստանում շատ տարածված ու ժողովրդի կողմից լայնորեն գործածվող բույս է: ՀՀ-ում հայտնի է ուրցի 5 տեսակ՝ նոսրածաղիկ, բլրակային, անդրկովկասյան, Կոչիի և Ֆեդչենկո: Տարածված է գրեթե բոլոր մարզերի ստորինից մինչև

վերին լեռնային գոտու չոր, քարքարոտ լանջերին, անմշակ վայրերում, ենթալպյան մարգագետիններում և այլն:

Փիփերթ, մուռշ, բալբա կամ բաղջուկ (լատ.՝ Malva): Փիփերթազգիների (տուղտազգիներ) ընտանիքին պատկանող միամյա, երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղատեսակից է: Տարածված է ՀՀ բոլոր մարզերում: Աճում է այգիներում, բանջարանոցներում, ճանապարհների և բնակավայրերի մոտ, ցանքերում՝ որպես մոլախոտ և այլն: ՀՀ-ում հայտնի է փիփերթի



4(5) տեսակ՝ անտառային (*M. sylvestris*), արհամարհված (*M. neglecta*), ցածր (*M. pusilla*) և այլն: Ցրտադիմացկուն չէ: Ծաղկում է հունիսից մինչև սեպտեմբեր ընկած ամիսներին, սերմերը հասունանում են հուլիս ամսից մինչև հոկտեմբեր: Փոշոտումը կատարվում է մեղունների միջոցով: Աճում է թեթև (ավազոտ), միջին (կավային) և ծանր (կավային) հողերում, նախընտրում է չոր հողեր:



Մինձ, այծամորուս կամ քոշմորուք (լատ.՝ *Tragopogon*): Այն աստղաձաղկազգիների (բարդաձաղկավորներ) ընտանիքի երկամյա կամ բազմամյա, կաթնանման հյութ պարունակող խոտաբույսերի ցեղատեսակից է: ՀՀ-ում հանդիպում է 10 տեսակ՝ հացազգատերև, մարգագետնային, արևելյան, Մոսնովսկու և այլն: Առավել տարածված է հացազգատերև սինձը, աճում է ՀՀ գրեթե բոլոր մարզերում՝ մարգագետիններում, տափաստաններում, անտառի բացատներում, չոր, քարքարոտ լանջերին և այլն:

Սիբեխ, սվեղ, դազի տոտիկ (լատ.՝ *Falcaria*): Նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքի միամյա, երկամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղատեսակից է: Հայտնի է 4 (այլ տվյալներով՝ 5-6) տեսակ, ՀՀ-ում՝ 2 տեսակ՝ սովորական (*F. vulgaris*) և սիբեխանման (*F. falcarioides*): Առաջինը տարածված է գրեթե բոլոր մարզերում: Աճում է անտառեզրերին, թփուտներում, դաշտերում: Երկրորդը հանդիպում է միայն Արարատ քաղաքի (Արարատի մարզ) շրջակայքում և Մեծամոր գետի ափերին (Արմավիրի մարզ): Աճում է խոնավ մարգագետիններում, աղի ճահճուտներում, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Վերջին տարիներին օշինդրային կիսաանապատների յուրացման հետևանքով սիբեխի բնական պաշարները Հայաստանում զգալիորեն նվազել են: Արարատի շրջանի աղի ճահճուտներում հանդիպում է սիբեխի ևս մեկ տեսակ՝ <<*F. falcarioides*>>-ը, որը բացառիկ արժեքավոր բույս է և գրանցված է ԽՍՀՄ Կարմիր գրքում:



Շուշանաբանջար, պալարակիր մանդակ, դմի, քեղակարոս (լատ.՝ *Chaerophyllum*): Նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքի բազմամյա կամ երկամյա, հազվադեպ՝ միամյա խոտաբույսերի ցեղատեսակից է: Հայտնի է մոտ 40 տեսակ: ՀՀ-ում հանդիպում է շուշանաբանջարի 5 տեսակ՝ ոսկեգօծ, վարդագույն, խոշորապտուղ, երկարամազ, սոխուկավոր (պալարակիր) կամ մանդակ՝ տարածված Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի և այլ մարզերի անտառներում, բացատներում, անտառեզրերին, լեռների խոտածածկ լանջերին և թփուտներում:

Ավելուկ, թրթնջուկ (լատ.՝ Rumex):

Թթվաշ, մատիտեղազգիների (հնդկացորենազգիներ) ընտանիքի միամյա, երկամյա և բազմամյա խոտաբույսերի և թփերի ցեղատեսակից է: ՀՀ-ում հայտնի է 12 տեսակ՝ ավելուկ սովորական (R. acetosa) կամ թթվաշ, գանգուր (R. crispus), ալպիական (R. alpinus), ավելուկանման (R. acetoselloides), թրթնջուկ փոքր (R. acetosella) և այլն:



Տարածված է ՀՀ գրեթե բոլոր մարզերում՝ որպես մոլախոտ: Աճում է ՀՀ-ի բարձրլեռնային և անտառատափաստանային գոտիներում՝ մարգագետիններում, նոսրանտառներում, թփուտներում, անտառեզրերին, լեռնալանջերին, գետափերին, խոնավ վայրերում, գետերի և լճերի մոտակայքում, ճանապարհների եզրերին: Այն ժողովրդական բժշկության մեջ ամենից շատ տարածված դեղաբույսերից է:

Թելուկ, թալ, թախտիկ (լատ.՝ Chenopodium):



Թելուկազգիների ընտանիքի միամյա, երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի, երբեմն՝ թփերի, կիսաթփերի ցեղատեսակից է: Տարածված է գրեթե բոլոր մարզերում: Աճում է գետերի, գետակների, առվակների ճամփեզրերին, աղբոտում և ցանքերը, խաղողի ու պտղատու ծառերի այգիները: Հայտնի է մոտ 160 տեսակ, ՀՀ-ում՝ 12 տեսակ՝ հոտավետ (Ch. botrys), բազմատերև (Ch. foliosum), սպիտակ կամ սովորական (Ch. album), թխակապույտ (Ch. glaucum), գարշահոտ (Ch. vulvaria), տափաստանային (Ch. murale) և այլն:

Եղինջ, կծան խոտ, կծան մրմռուկ, աղինջ, դադդղան, դարդահան (լատ.՝ Urtica):

Եղինջազգիների ընտանիքի միամյա և բազմամյա, եղինջ երկտուն (Urtica dioica L.), հազվադեպ՝ եղինջ այրող (Urtica urens L.) միատուն բույսերի ցեղատեսակից է: Տարածված է ՀՀ բոլոր մարզերում՝ լեռնային, տափաստանային, անտառային գոտիներում, գետահովիտներում, խոնավ վայրերում և այլն: ՀՀ-ում աճում է 2 տեսակ՝ եղինջ երկտուն (U. dioica) և եղինջ այրող (լատ.՝ U. urens): Դեղաբույս է:



Անանուխ (լատ.՝ Mentha Piperita L.): Բազմամյա, շրթնազգիների ընտանիքին պատկանող կոճղարմատավոր վայրի կամ մշակովի խոտաբույս է: Աճում է ամենուրեք: Տերևները և ծաղիկները պարունակում են եթերայուղ, կարոտին, մենթոլ և այլն: Մշակովի անանուխը (լատիներեն անվանումը՝ Mentha Piperita L.) ունի հակադիտ, սուր ատամնավոր եզրերով, ձվաձև կամ նշտարաձև տերևներ, կարմրավուն մանր ձողիկներ: Բույսը ցրտադիմացկուն է, խոնավասեր ու պահանջկոտ լույսի նկատմամբ, իսկ շոգ եղանակին նկատվում է աճի խիստ դանդաղեցում: Ծաղկում է հիմնականում հուլիս-օգոստոս ամիսներին:

Մարիամախոտ (լատ.՝ *Teucrium polium* L.): Բարձրությունը հասնում է 0,2 մ-ի: Ծաղկում է հունիսից մինչև սեպտեմբեր ամիսներին, իսկ սերմերը հասունանում են օգոստոսից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում: Փոշոտումը կատարվում է մեղունների միջոցով: Չի աճում ստվերում: Աճում է թեթև (ավազային), միջին (կավային) և ծանր (կավային) հողերում, նախընտրում է չոր հողեր, կարող է աճել նաև խոնավ հողերում, ինչպես նաև թթու, բնային և հիմնային (ալկալային) հողերում:



Շամպինիոն, ագարիկոն (լատ.՝ *Psalliota campestris* Quel.): Աճում է ամենուրեք՝ մեծ խմբերով, առավելապես գոմադրով պարարտացված հողի վրա, այգիներում, պարտեզներում, ջերմոցներում, արոտավայրերում, փշատերև և խառը անտառներում հունիսից մինչև հոկտեմբեր ընկած ժամանակաշրջանում: Ուտելի սունկ է: Արհեստականորեն աճեցվում է շատ երկրներում,

այդ թվում՝ ՀՀ-ում՝ հատուկ սնկանոցներում: Աշխարհում աճեցվող սնկերի արտադրանքի ծավալով զբաղեցնում է առաջին տեղը: ՀՀ-ում առավել հայտնի են շամպինիոնի անտառային (*A. silvaticus*), սովորական (*A. campestris*), դաշտային (*A. arvensis*) տեսակները, և առավել տարածված ու լայնորեն օգտագործվող տեսակը՝ շամպինիոն երկսպորավորը (*A. bisporus*):

Ծնեբեկ (լատ.՝ *A. officinalis* L.): Բազմամյա մշակաբույս է, պատկանում է շուշանազգիների ընտանիքին: Վայրի վիճակում տարածված է Արարատյան հարթավայրում և հյուսիս-արևելյան շրջաններում: Այս մշակաբույսը օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ՝ որպես բուժող միջոց: Ծնեբեկը նույն տեղում մնում է 15-20 տարի: Մեծ նշանակություն ունի հողի ճիշտ ընտրությունը: Ծնեբեկին պետք է հատկացվի լավ տաքացվող, բարձրադիր, ցուրտ քամիներից պաշտպանված ավազակավային և կավավազային հողեր: Ցանքը Արարատյան դաշտում պետք է կատարել մայիս ամսվա առաջին տասնօրյակում: Մեկ հեկտար հողատարածքին անհրաժեշտ է 3-3,5կգ սերմ:



Վայրի բանջարաբուստանային բույսերն ունեն պահպանության կարիք, օժտված են մի շարք կարևոր, գործնականորեն արժեքավոր հատկանիշներով և սելեկցիոն նշանակությամբ: Նրանք հարուստ գենոֆոնդ են հետագա ուսումնասիրությունների և օգտագործման առումով:



Գեղարքունիքի մարզն իր տարածքով Հայաստանի ամենամեծ մարզն է: Հիմնականում զբաղեցնում է աշխարհի խոշորագույն քաղցրահամ լճերից մեկի՝ Սևանա լճի ավազանը: Մարզը Հայաստանի արևելքում է՝ Գեղամա, Վարդենիսի, Արեգունու, Արևելյան Սևանի, Սևանի և Փամբակի լեռնաշղթաների միջև: Գեղարքունիքի մարզից հատկապես առանձնացնում ենք 2 (երկու) համայնք.

- **Քալավան**
- **Վարդենիկ:**

1. Կալավան համայնք (տարածքը՝ 9,1քկմ, բնակչությունը՝ 260 մարդ):
Բնապահպանական վիճակը ապահովում է օրգանական գյուղատնտեսական արտադրանքի կազմակերպումը: Բնակչությունը զբաղվում է կենդանիների բուծմամբ, բանջարաբուստանային կուլտուրաների և հատապտուղների աճեցմամբ ու մշակությամբ:

2. Վարդենիկ համայնք (տարածքը՝ 91քկմ, բնակչությունը՝ 10702 մարդ):
Բնակչության հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ (հացահատիկի, կարտոֆիլի և կաղամբի աճեցմամբ) և անասնապահությամբ (կենդանիների բուծմամբ):

Շնորհիվ նպաստավոր աշխարհագրական դիրքի և ագրոէկոլոգիական պայմանների՝ Գեղարքունիքի մարզում բանջարաբուստանային մշակաբույսերի ցանքատարածությունները զգալիորեն ավելացել են, աճում են բանջարեղենի տարբեր տեսակներ. այն գյուղատնտեսության առաջնային ենթաճյուղերից է, ունի հազարամյակների պատմություն և ավանդույթներ:

Ներոհիշյալ ցանկում տեղ են գտել Գեղարքունիքի մարզի (գյուղական համայնքներ) հետևյալ մշակաբույսերը.



Կարտոֆիլ (լատ.՝ *Solanum tuberosum* L.): Գյուղատնտեսական կարևորագույն մշակաբույսերից է: ՀՀ-ում մշակության մեջ տարածված են կարտոֆիլի հոլանդական վիրուսազերծ սորտերը, որոնք կենսատեխնոլոգիական եղանակով ստացվել են հյուսվածքային կուլտուրայի միջոցով: Բույսերի աճն ուժեղ է՝ տերևային զանգվածի խիստ ծածկոցով: Վեգետացիայի տևողությունը տարբեր է (վաղահաս, միջավաղահաս, միջահաս և ուշահաս)՝ էլնելով վայրի բնակլիմայական և էկոլոգիական պայմաններից: ՀՀ-ում կան առանձին ֆերմերների տնտեսություններ, որոնք զբաղվում են հոլանդական տնկանյութերի ներկրմամբ, բազմացմամբ և գյուղացիական տնտեսություններին մատակարարելով:

Կորնգան (լատ.՝ *Onobrychis antasiatica* Khin.): Հանրապետությունում հիմնականում մշակում են լեռնային և նախալեռնային շրջանների անջրդի պայմաններում: Պատկանում է բակլագգիների ընտանիքին: Ունի վարելաշերտում ուժեղ ճյուղավորվող արմատային համակարգ: Կորնգանը երաշտադիմացկուն և ձմեռադիմացկուն բույս է: Այն մշակվում է բոլոր տիպի հողերում, բացառությամբ թթու, ճահճային, աղակալած և բարձր ստորգետնյա ջրեր ունեցող հողերի:



Սզնի, ալոճենի (լատ.՝ *Crataegus*): Վարդագգիների (վարդածաղիկներ) ընտանիքի տերևաթափ թփերի և ծառերի ցեղատեսակից է: Հայտնի է ՀՀ-ում ալոճենու մոտ 10 տեսակ՝ սզնի արևելյան (*C.orientalis*), սզնի կովկասյան (*C.caucasica*), սզնի կեռասոնակավոր (*C.kyrtostyla*), սզնի Մեյերի (*C.meyeri*) և այլն: Մեղրատու է: Սզնի պոնտական (*C.pontica*) հազվագյուտ տեսակը հանդիպում է Խոսրովի անտառ արգելոցում, Ուրցաձորում, աճում է չոր, քարքարոտ թեքություններում, կաղնու և գիհու նոսրանտառներում (800-1800մ բարձրություններում): Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:



Չիչխան դժնիկանման (լատ.՝ *Hippophaë rhamnoides* L.): Պտուղները հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Աճում է խոնավ տեղերում՝ ճահճուտներում, գետափերին: Բուժական նպատակով օգտագործում են բույսի պտուղները և սերմերից ստացվող յուղը: Չիչխան (լատ.՝ *Hippophae*), փշարմավ, ձիափշատ, ձիափուշ, ձորի փուշ, փշատագգիների ընտանիքի տերևաթափ ծառերի կամ թփերի ցեղատեսակ է: Հայտնի է 3, իսկ Հայաստանում՝ 1 տեսակ՝ Չիչխան դժնիկանման (*Hippophae rhamnoides*):



Տարածված է Սյունիքի, Վայոց ձորի մարզերում, Սևանի ավազանում և այլն: Աճում է գետերի և առուների հովիտներում, ճահճուտներում և այլ խոնավ վայրերում: Աճեցվում է ավազուտների ամրապնդման, էրոզիացված հողերի յուրացման, կանաչ ցանկապատերի համար: Պահանջկոտ չէ հողի նկատմամբ, չորադիմացկուն է:

Քեղ (լատ.՝ **Heracleum pastinacifolium K. Koch**): ՀՀ-ում հանդիպում է 7 տեսակ՝ թավոտ, առաջնասիական, ստեպլինատերև, խնկեղեգային և այլն: Տարածված է Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերի ալպյան մարգագետիններում, անտառի բացատներում, գետափերին, ժայռաճեղքերում և այլուր: Դեղաբույս է, պարունակում է եթերայուղեր, շատ տեսակների տերևները, ցողունները և մատղաշ ընձյուղներն ուտելի են:



Ընդհանրացնելով մարդկության պատմության մեջ կենսաբազմազանության դերն ու անհրաժեշտության կարևորությունը՝ կարելի է ասել, որ, ինչպես ամբողջ աշխարհում,



այնպես էլ մեր՝ ՀՀ կենսաբազմազանության մեջ տարեցտարի էնդեմիկ (բնիկ), ռելիկտային (մնացուկային) և հազվադեպ հանդիպող տեսակները պակասում են: Դրա պատճառները երկուսն են՝ բնական և մարդածին. ամենախնտենսիվը կենսաբազմազանության կրճատման վրա ազդում է մարդկային գործոնը: Ուստի կենսաբազմազանության պահպանման համար ՀՀ-ում գործում են մի շարք օրենքներ, որոնք ուղղված են անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելուն և կանխելուն բազմաթիվ տեսակների

անհետացումն ու դեգրադացումը. չէ՞ որ կենսաբազմազանության պահպանումը և տևական օգտագործումը կարևոր հիմք են համարվում մարդկության բարեկեցության համար, ասել է թե կենսամիջավայրերի ոչնչացման և մասնատման մեջ է երկրի կենսաբազմազանության նվազման ամենամեծ վտանգը...